



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
(+374 10) 55-06-02 (Tel./Fax), cs@ysu.am, www.ysu.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°10

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ 27.06.2017 ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻՑ

Օրակարգ`

1. Պետական ավարտական քննությունների արդյունքների ամփոփում
2. Մրցույթ
3. Ընթացիկ հարցեր

1-ին հարցի վերաբերյալ

ԼՍԵՑԻՆ` ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս, պետական քննական հանձնաժողովի նախագահ Յու. Շուքուրյանը համառոտ ներկայացրեց պետական ավարտական քննությունների արդյունքները: Բակալավրիատի առկա ուսուցման ավարտական քննություններին մասնակցել են 140 ուսանող, 4-ը` նախորդ տարվա ուսանող, որոնցից 140-ը հանձնել է բակալավրիատի պետական քննություններ, իսկ 135-ը պաշտպանել են ավարտական աշխատանք, 1-ը չի ներկայացել ավարտական աշխատանքի պաշտպանությանը:

Ամփոփիչ ավարտական քննության արդյունքները բակալավրիատում հետևյալն են` 33 «գերազանց», 40 «լավ», 67 «բավարար»:

Բակալավրիատի ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են` 63 «գերազանց», 59 «լավ», 13 «բավարար»:

Մագիստրոսական թեզերի պաշտպանության մասնակից 18 ուսանողներից (2-ը նախորդ տարվա ուսանող են) ներկայացել են 16-ը: Բացակայել են 2 ուսանող այս տարվա շրջանավարտներից:

Մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները հետևյալն են 11 «զերագանց», 5 «լավ»:

Անդրադառնալով մագիստրական թեզերի պաշտպանության արդյունքներին, հարկ է նշել, որ թեզերում կատարված աշխատանքների թեմաները արդիական էին և պահանջում էին լավ տեսական գիտելիքներ ու կիրառական փորձառություն: Ներկայացված թեզերից մի քանիսը բավարարում էին ամենաբարձր պահանջներին և դրանց հեղինակներն անկասկած կարող են շարունակել գիտական հետազոտությունները: Խրախուսանքի արժանի են այն թեզերը, որոնցում ստացված արդյունքները տպագրված են գիտական հանդեսներում: Պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել թեզերի ստեղծագործական բաղադրիչին:

Բակալավրի կոչման են արժանացել 139 ուսանողներ, որոնք ցուցաբերել են համապատասխան գիտելիքներ: Սակայն բարձր է բավարար գնահատականներ ստացող ուսանողների թիվը: Ցանկալի է ուժեղացնել ուսանող-գիտական ղեկավար կապը՝ ուշադրություն դարձնելով ուսանողների՝ աշխատանքին պատասխանատվությամբ վերաբեր2017թ.-ի հանձնաժողովը ատեստավորումը անց է կացրել համապատասխան ժամանակացույցին համաձայն:

Հեռակա ուսուցման պետական հանձնաժողովի նախագահ **Ռ. Քամայանը** ներկայացրեց հեռակա ուսուցման պետական ավարտական քննությունների արդյունքները: Բակալավրիատի հեռակա ուսուցման ավարտական քննություններին մասնակցել են 29 ուսանող, 1-ը՝ նախորդ տարվա ուսանող, որոնցից 29-ը հանձնել է պետական քննություններ, իսկ 28-ը պաշտպանել են ավարտական աշխատանք:

Ամփոփիչ ավարտական քննության արդյունքները հետևյալն են՝ 29 «բավարար»:

Բակալավրիատի ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են՝ 3 «գերազանց», 9 «լավ», 16 «բավարար»:

Բակալավրի կոչման են արժանացել 29 ուսանողներ, որոնք ցուցաբերել են համապատասխան գիտելիքներ: Մակայն բարձր է բավարար գնահատականներ ստացող ուսանողների թիվը: Ցանկալի է ուժեղացնել ուսանող-գիտական ղեկավար կապը՝ ուշադրություն դարձնելով ուսանողների՝ աշխատանքին պատասխանատվությամբ վերաբերվելու հանգամանքին:

Ներկայացված ավարտական աշխատանքները, որպես կանոն, պարունակում էին համակարգչային հաշվարկներ իրականացված ծրագրավորման փաթեթների օգնությամբ: Վերջում Ռ. Քամալյանը նշեց, որ ավարտական աշխատանքների գնահատման համար առավել նպատակահարմար է տաս բալանոց սանդղակը:

Որոշեցին՝ Պետական ավարտական քննությունների արդյունքները համարել բավարար:

2-ին հարցի վերաբերյալ

Լսեցին՝ Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտի պաշտոնի համար հայտարարված մրցույթին ֆ.մ.գ.թ. Երվանդ Մկրտչյանի մասնակցելու հարցը: Ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ Յու. Հակոբյանը խորհրդին ներկայացրեց Ե. Մկրտչյանի փաստաթղթերը: Նա նշեց, որ դրանք համապատասխանում են ներկայացված պահանջներին:

Արտահայտվեցին՝ Դեկանի տեղակալներ Գ. Ասլամազյանը, Է. Դանոյանը, պաշտպանեցին Երվանդ Մկրտչյանի թեկնածությունը:

Որոշեցին՝ Ե. Մկրտչյանին ընդգրկել փակ, գաղտնի քվեարկության ցուցակում:

Լսեցին՝ Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտի պաշտոնի համար հայտարարված մրցույթին ֆ.մ.գ.թ. Սահակ

Սահակյանի մասնակցելու հարցը: Ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ Յու. Հակոբյանը խորհրդին ներկայացրեց Ս. Սահակյանի փաստաթղթերը: Նա նշեց, որ դրանք համապատասխանում են ներկայացված պահանջներին:

Արտահայտվեցին՝ Դեկան Վ. Դումանյանը, Է. Դանոյանը, պաշտպանեցին Սահակ Սահակյանի թեկնածությունը:

Որոշեցին՝ Ս. Սահակյանին ընդգրկել փակ, գաղտնի քվեարկության ցուցակում:

Լսեցին՝ Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտի պաշտոնի համար հայտարարված մրցույթին ֆ.մ.գ.թ. Մուսաննա Մանուկյանի մասնակցելու հարցը: Ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ Յու. Հակոբյանը խորհրդին ներկայացրեց Ս. Մանուկյանի փաստաթղթերը: Նա նշեց, որ դրանք համապատասխանում են ներկայացված պահանջներին:

Արտահայտվեցին՝ Դեկան Վ. Դումանյանը, Լ. Միքայելյանը, պաշտպանեցին Մուսաննա Մանուկյանի թեկնածությունը:

Որոշեցին՝ Ս. Մանուկյանին ընդգրկել փակ, գաղտնի քվեարկության ցուցակում:

Լսեցին՝ Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի դոցենտի պաշտոնի համար հայտարարված մրցույթին ֆ.մ.գ.թ. Պետրոս Պետրոսյանի մասնակցելու հարցը: Ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ Յու. Հակոբյանը խորհրդին ներկայացրեց Պ. Պետրոսյանի փաստաթղթերը: Նա նշեց, որ դրանք համապատասխանում են ներկայացված պահանջներին:

Արտահայտվեցին՝ Դեկանի տեղակալ Գ. Ասլամազյանը, Ա. Ալեքսանյանը, պաշտպանեցին Պետրոս Պետրոսյանի թեկնածությունը:

Որոշեցին՝ Պ. Պետրոսյանին ընդգրկել փակ, գաղտնի քվեարկության ցուցակում:

Լսեցին՝ Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի ղոցենտի պաշտոնի համար հայտարարված մրցույթին ֆ.մ.գ.թ. Էդուարդ Եղիազարյանի մասնակցելու հարցը: Ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ Յու. Հակոբյանը խորհրդին ներկայացրեց Է. Եղիազարյանի փաստաթղթերը: Նա նշեց, որ դրանք համապատասխանում են ներկայացված պահանջներին:

Արտահայտվեցին՝ Դեկան տեղակալ Գ. Ասլամազյանը, Վ. Գաբրիելյանը, պաշտպանեցին Էդուարդ Եղիազարյանի թեկնածությունը:

Որոշեցին՝ Է. Եղիազարյանին ընդգրկել փակ, գաղտնի քվեարկության ցուցակում:

Լսեցին՝ Դիսկրետ Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի դասախոսի պաշտոնի համար հայտարարված մրցույթին Նարինե Իսախիրյանի մասնակցելու հարցը: Ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ Յու. Հակոբյանը խորհրդին ներկայացրեց Ն. Իսախիրյանի փաստաթղթերը: Նա նշեց, որ դրանք համապատասխանում են ներկայացված պահանջներին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ս. Նիգիյանը, Ս. Սարգսյանը, պաշտպանեցին Ն. Իսախիրյանի թեկնածությունը:

Որոշեցին՝ Ն. Իսախիրյանին ընդգրկել փակ, գաղտնի քվեարկության ցուցակում:

Երևանի պետական համալսարանի Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի թ. 10 նիստում ընտրվել է հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

1. Ասլամազյան Գևորգ
2. Սարգսյան Սիրանուշ
3. Սարգսյան Էլմիրա

Ֆակուլտետի գիտական խորհրդի 25 անդամներից ներկա էին 19 -ը:

Քվեարկվել են Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի դասախոսի, Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման և Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնների դոցենտների թեկնածությունները:

Քվեարկությանը մասնակցել են ֆակուլտետի գիտական խորհրդի 19 անդամներ:

Բաժանվել է 19 քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է 19 քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են.

Ազգանուն անուն	կողմ	դեմ	անվավեր
Եղիազարյան Էդուարդ	18	0	1
Պետրոսյան Պետրոս	19	0	0
Մկրտչյան Երվանդ	19	0	0
Մանուկյան Սուսաննա	18	0	1
Սահակյան Սահակ	19	0	0
Իսայիրյան Նարինե	18	1	0

Անվավեր քվեաթերթիկների քանակը` 2 :

Փակ(գաղտնի) քվեարկության արդյունքներով Երվանդ Մկրտչյանը ընտրվել է Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտի պաշտոնում:

Փակ(գաղտնի) քվեարկության արդյունքներով Սահակ Սահակյանը ընտրվել է Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտի պաշտոնում:

Փակ(գաղտնի) քվեարկության արդյունքներով Սուսաննա Մանուկյանը ընտրվել է Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտի պաշտոնում:

Փակ(գաղտնի) քվեարկության արդյունքներով Էդուարդ Եղիազարյանը ընտրվել է Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի դոցենտի պաշտոնում:

Փակ(գաղտնի) քվեարկության արդյունքներով Պետրոս Պետրոսյանը ընտրվել է Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի դոցենտի պաշտոնում:

Փակ(գաղտնի) քվեարկության արդյունքներով Նարինե Իսախրյանը ընտրվել է Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի դասախոսի պաշտոնում:

3-րդ հարցի վերաբերյալ

Լսեցին՝ «Բուլյան ֆունկցիաներ: Խնդիրների ժողովածու» ուսումնամեթոդական ձեռնարկի(հեղինակներ՝ Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի դոցենտ ֆ.մ.գ.թ. Հ.Յ.Հակոբյան, ասիստենտ Հ.Գ.Մովսեսյան) տպագրության երաշխավորելու հարցը:

Որոշեցին՝ «Բուլյան ֆունկցիաներ: Խնդիրների ժողովածու» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Լսեցին՝ - «Ծրագրավորում և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ » ամբիոնի ասպիրանտ Ռուբեն Աղաջանյանի ատեստավորման հարցը (ղեկավար Ս. Նիզիյան):

Որոշեցին՝ Ռուբեն Աղաջանյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2016-17 ուսունական տարում:

Լսեցին՝ - «Ծրագրավորում և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ » ամբիոնի ասպիրանտ Դավիթ Գրիգորյանի ատեստավորման հարցը (ղեկավար Ս. Նիզիյան):

Որոշեցին՝ Դավիթ Գրիգորյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2016-17 ուսունական տարում:

Լսեցին՝ - «Թվային անալիզ և մաթեմատիկական մոդելավորում » ամբիոնի ասպիրանտ Հայկ Ավդալյանի Գրիգորյանի ատեստավորման հարցը (ղեկավար Ս. Նիզիյան):

Որոշեցին՝ Հայկ Ավդալյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2016-17 ուսունական տարում:

Լսեցին՝ - «Դիսկրետ մաթեմատիկա և տեսական ինֆորմատիկա » ամբիոնի ասպիրանտ Աշոտ Մինասյանի ատեստավորման հարցը (ղեկավար Ս. Նիզիյան):

Որոշեցին՝ Աշոտ Մինասյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2016-17 ուսունական տարում:

Լսեցին՝ - «Դիսկրետ մաթեմատիկա և տեսական ինֆորմատիկա » ամբիոնի ասպիրանտ Արման Ճիտոյանի ատեստավորման հարցը (ղեկավար Ս. Նիզիյան):

Որոշեցին՝ Արման Ճիտոյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2016-17 ուսունական տարում:

Լսեցին՝ - «Դիսկրետ մաթեմատիկա և տեսական ինֆորմատիկա » ամբիոնի ասպիրանտ Խաչատուր Հակոբյանի ատեստավորման հարցը (ղեկավար Ս. Նիզիյան):

Որոշեցին՝ Խաչատուր Հակոբյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2016-17 ուսունական տարում:

Լսեցին՝ - «Դիսկրետ մաթեմատիկա և տեսական ինֆորմատիկա » ամբիոնի ասպիրանտ Դավիթ Սարգսյանի ատեստավորման հարցը (ղեկավար Ս. Նիզիյան):

Որոշեցին՝ Դավիթ Սարգսյանի կատարած աշխատանքը գնահատել դրական և երաշխավորել ատեստավորումը 2016-17 ուսունական տարում:

Լսեցին՝ Դեկան Վ. Դումանյանը իր ելույթում նշեց, որ Քամալյանի կողմից բարձրացված գնահատման 10 բալանոց սանդղակի խնդիրը կարևոր է, բայց այս առաջարկը ևս զերծ չէ թերություններից: Գնահատման կարգը հաստատվել է ԵՊՀ գիտխորհրդի կողմից և մենք պարտավոր ենք առաջնորդվել դրանով: Ավարտական աշխատանքների գնահատման

Ժամանակ միշտ էլ դժվար խնդիր է եղել ուսանողի ինքնուրույնության աստիճանը որոշելը: Ավարտական աշխատանքը գնահատելիս կարևոր է պարզել, արդյոք առաջադրված աշխատանքը կատարված է թե ոչ: Բակալավրիատում պետք չէ շատ բարձր նշաձող սահմանել ավարտական աշխատանքի նկատմամբ: Ուսանողից պահանջվում է ներկայացնել որոշակի ամփոփ աշխատանք, որտեղ գիտահետազոտական տարրը ցանկալի է, բայց ոչ պարտադիր: Հեռակա ուսուցումը որոշակի բուժերի դեր է կատարում առկա ուսուցման պահանջվող մակարդակը պահպանելու համար և մասնագիտական ամբիոններին ապահովում է ժամաքանակներով:

Ֆակուլտետը դիմորդների քանակով ԵՊՀ-ում առաջինն է, որը ֆակուլտետի համար խիստ դրական փաստ լինելով հանդերձ, առաջ է բերում ուսանողության այդ քանակին պատշաճ կրթական ծառայություն մատուցելու խնդիր: Ֆակուլտետը ամեն ինչ պետք է անի այդ խնդիրը պատվով լուծելու համար:

Ուսանողների մի փոքր մաս կա, որոնք լուրջ չեն վերաբերվում ավարտական աշխատանքի կատարմանը և այդ ուղղությամբ աշխատանքներ սկսում են իրականացնել պաշտպանությունից մեկ ամիս և անգամ ավելի կարճ ժամանակահատված առաջ կամ բողոքում են որ իրենք չեն կարողացել ղեկավար ընտրել: Այդ պատճառով Վ. Դումանյանը առաջարկեց յուրաքանչյուր ուստարվա երկրորդ ընթացիկ քննություններից առաջ (մինչև նոյեմբերի 15-ը) խիստ հաշվառում իրականացնել, որպեսզի բոլոր ուսանողները ունենան ավարտական աշխատանքի թեմա և ղեկավար: Դա կարելի է ձևակերպել հրամանի տեսքով:

Որոշեցին՝ Առաջարկը ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ

Վ. Դումանյան

Գիտական խորհրդի քարտուղար

Է. Դանոյան